23 հուլիսի 2020 թվականի N 1228 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 13-Ի N 1140-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Վարդենիս քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 1140-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 3-րդ կետի «ա» ենթակետում «199,75» թիվը փոխարինել «199,705» թվով.

2) N 4 հավելվածում՝

ա. «Բնակավայրերի» տողում 128.91 թիվը փոխարինել «128.865» թվով,

բ. «Ընդամենը» տողում «199,75» թիվը փոխարինել «199,705» թվով.

3) N 6 հավելվածում 18-րդ էջում՝

ա. «Բնակավայրերի» 214-009 տողի «չմասնավորեցվող» սյունակում «0.76» թիվը փոխարինել «0.715» թվով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2 տողով.

«

0214-0097	0.018								Հասար.կառ.
0214-0099	0.027								Հասար.կառ.

»:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքի ղեկավարին՝ սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությամբ լրացվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում կառուցված համապատասխան շինությունների օրինականացման գործընթացի ավարտից հետո 3 ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նախաձեռնել նշված հողամասերը բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողերի գործառնական նշանակության չմասնավորեցվող հողերի կազմ վերադարձնելու գործընթաց:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2020 թ. հուլիսի
Երևան